

Սալահէտտին Սիւննի իսլամ էր, այսինքն ուղղափառ. Ֆաթիմեանք շիիս իսլամութեան կը վերաբերէին: Շիրտներու ազանդը ի սկզբան քաղաքական էր. յետոյ անոր խառնուեցան կրօնական սկզբունքներ: Սիւննիներու համար շիրտները հերեափկոս և հերձուածող էին. անոնք մեծ տարբերութիւններ ունէին ծիսական, վարդապետական և Գուբանի մեկնարանական տեսակէտներէ զիտելով. միևնոյն ժամանակ սիւննիները շիրտներու ամուսնական կանոնի վերաբերեալ ինչ ինչ կէտերը դատապարտելի կը գտնէին: Ֆաթիմեանց երկու դարու տիրապետութիւնը տաքածած էր շիրական իսլամութիւնը թէ՛ Եգիպտոսի և թէ՛ Սիւքիոյ մէջ. այս երկիրներու ժողովուրդներու մէջ շիրտ մեծագոյն մաս մը կար: Սալահէտտին վերջ տալ ուզեց այդ ոչ-ուղղափառ իսլամութեան, և այդ մասին լուրջ ձեռնարկներու զիմեց. ցըրուեց Ֆաթիմեանց խառնուրդ նկարագրով բանակը, եւ վերակազմեց զանիկա քուրթ եւ թուրք տարրերէ, որոնց հաւատարմութեան վրայ վստահ էր. պալատը մաքրագործեց, արգելափակեց Ֆաթիմեան իշխանները ու զանոնք դրաւ անդործութեան վիճակի մէջ: Ֆաթիմեանց այս ցրուեալ բանակին մէջ կը գլտնուէին նաև հայ զօրապետներ և զինուորներ:

Սալահէտտինի այս քաղաքական ու զինուորական արմատական կարգադրութիւնները հինգ անգամ ոտք հանեցին Ֆաթիմեանները. վերջինները իրենց կուսակից նիւպիական և պալատական սեւամորթներէն մեծ բանակներ կազմելով դաւադրութիւններ կը սարքէին տապալելու համար Սալահէտտինի իշխանութիւնը: Ֆաթիմեան մեծ ռազմավար մը գլուխը անցած նոյն բանակներուն, կ'ուզէր վերահաստատել Ֆաթիմեան գահը՝ անոր վըրայ բազմեցնելով վախճանած Սուլթանին Էլ-Համիտ-Պիլլահ որդին. Ֆաթիմեանց այս դաւադրական ապստամբութիւնները չէին յաջողեր. Սալահէտտինի և իրեններուն ոյժը անընկճելի մնացած է. նոյնիսկ Ֆաթիմեանք Գահիրէի փողոցներուն մէջ շարունակած են իրենց ընդդիմութիւնները, որ քանիցս կրկնուած են. անոնք զիրաւ տեղի չտուին Էյուպեանց: Ինչպէս յիշեցինք վերև, Ֆաթիմեանց միացած էին նուպիական սեւամորթները, որոնցմէ բազմաթիւ անձեր պալատականներ էին արդէն Ֆաթիմեանց ժամանակ. Շաւաք և Իպկ-եղ-Արիխր պատմագիրներուն ըսածին նայելով՝ (Տե՛ս Սիւնն, 1930, էջ 340-41) Ֆաթիմեանց միա-